**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/44636-2019

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (ԽՍ-264-02.09.2019-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1330 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-264-02.09.2019-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է սահմանել, որ զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամին տարվա ընթացքում մեկ անգամ կարող է վճարվել միանվագ դրամական օգնություն նաև այն դեպքում, երբ զինծառայողի ընտանիքի անդամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատել է իր՝ ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ամուսին, զավակ կամ ծնող լինելու փաստը:

Նախագծի ընդունումը հիմնավորվում է նրանով, որ օրենքի համաձայն դրամական օգնությունը տրամադրվում է զինվորական ծառայության ընթացքում զոհված կամ մահացած զինծառայողի ընտանիքի միայն այն անդամներին, ովքեր ներկայացրել են «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրված ամուսնության կամ ծննդյան վկայական: Հատկապես նշված խնդիրը վերաբերում է մահացած զինծառայողի ընտանիքի անդամներից ամուսնուն դրամական օգնություն տրամադրելուն, քանի որ Հայաստանի Հանրապետության ոչ բոլոր քաղաքացիներն են իրենց փաստացի ամուսնության և ընտանիք կազմելու փաստը հաստատում ՔԿԱԳ-ի մարմնում՝ այսպիսով զրկվելով դրամական օգնություն ստանալու իրավունքից:

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասով որպես ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունք՝ ամրագրվում է, որ ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունը: Նույն օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն

ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցման պահից: Այսինքն, հաշվի առնելով պետական ու հասարակական շահերը, ինչպես նաև ամուսնացողների և նրանց զավակների անձնական և գույքային շահերի պաշտպանությունը՝ օրենքով սահմանված է ամուսնության գրանցման որոշակի կարգ: Ավելին, Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով չգրանցված ամուսնությունը չի ճանաչվում և չի առաջացնում որևէ իրավական հետևանք: Հետևաբար, ամուսնության գրանցման փաստը հանդիսանում է ամուսնու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավունքների և պարտկանությունների ծագման նախապայման, ուստի առանց վերջինիս անհնար է դառնում նաև անձի՝ ամուսնու կարգավիճակից բխող իրավունքներից և արտոնություններից օգտվելու հնարավորությունը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն նշված հոդվածի իմաստով զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում ամուսինը, զավակները և ծնողները: Նշված կարգավորումից ողջամտորեն ենթադրվում է, որ օրենսդիրը տվյալ դեպքում նկատի է ունեցել անձի՝ ամուսին, զավակ և ծնող լինելու փաստը հենց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված լինելու հանգամանքը, ուստի նախագծով առաջարկվող կարգավորման իրացումը փաստացի հակասության մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի կարգավորումների հետ այն իմաստով, որ միայն համապատասխան պետական գրանցում ստանալու հիմքով անձը կարող է ճանաչվել որպես ընտանիքի անդամ: Նախագծի ընդունումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ավելացման, որի չափը հնարավոր չէ գնահատել՝ համապատասխան տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված:

Հաշվի առնելով նշվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ:

Միաժամանակ հայտնում ենք նաև, որ օրենքի նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտ փոփոխություններ կկատարվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կամ զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքին

դրամական աջակցություն տալու կարգը և դրամական աջակցության չափերը, զինվորական ծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցելու կարգը և չափերը, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին տրվող միանվագ դրամական օգնության չափը, վճարման կարգը և պայմանները սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 18-ի N 341 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 916-Ն որոշման մեջ:

19 սեպտեմբերի 2019 թվականի N 1330 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Գաբրիել Բալայանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Խ-264-02.09.2019-ՊԱ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 19
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-264-02.09.2019-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի 63-րդ հոդվածը լրացնել նոր 12.1-ին մասով.

«12.1. Սույն հոդվածի իմաստով՝ ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամին սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքում տարվա ընթացքում մեկ անգամ կարող է վճարվել միանվագ դրամական օգնություն նաեւ այն դեպքում, երբ սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված՝ զինծառայողի ընտանիքի անդամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատել է իր՝ ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ամուսին, զավակ կամ ծնող լինելու փաստը:»:

Հոդված 2. 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ունի հետադարձ ուժ՝ այն տարածվում է մինչ դրա ուժի մեջ մտնելը ծագած բոլոր համապատասխան իրավահարաբերությունների վրա:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Համաձայն «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 63-րդ հոդվածի 10-րդ մասի՝ (...) ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին նույն հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքերում տարվա ընթացքում մեկ անգամ կարող է վճարվել միանվագ դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով; ըստ նույն հոդվածի 12-րդ մասի՝ զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում ամուսինը, զավակները եւ ծնողները:

Վերոնշյալ դրամական օգնությունը, սակայն, տրամադրվում է զինվորական ծառայության ընթացքում զոհված կամ մահացած զինծառայողի ընտանիքի միայն այն անդամներին, ովքեր ներկայացրել են «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրված ամուսնության կամ ծննդյան վկայական:

Վերոնշյալ իրավիճակի հետ կապված, որպես կանոն, խնդիրը կայանում է մահացած զինծառայողի ընտանիքի անդամներից ամուսնուն դրամական օգնություն տրամադրելուն, քանի որ, Հայաստանի Հանրապետության ոչ բոլոր քաղաքացիներն են իրենց փաստացի ամուսնության եւ ընտանիք կազմելու փաստը հաստատում ՔԿԱԳ մարմնում: Այսպիսով, տվյալ քաղաքացիները զրկվում են դրամական օգնություն ստանալու իրավունքից:

Վերոնշյալ խոցելի կարգավիճակում հայտնված անձանց իրավունքները պաշտպանելու եւ Օրենքի 63-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումները ֆորմալ պահանջներով սահմանափակելուց խուսափելու նպատակով՝ առաջարկվում է հետեւյալ լուծումը.

- զինծառայողների ընտանիքների այն անդամները, ովքեր չունեն օրենքով սահմանված կարգով տրված ամուսնության կամ ծննդյան վկայական, չեն զրկվի դրամական օգնություն ստանալու իրավունքից, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատել են իրենց փաստացի ամուսին, զավակ կամ ծնող լինելու փաստը:

Նախագծի ընդունման արդյունքում զոհված կամ մահացած զինծառայողի ընտանիքների այն անդամները, ում պետական համապատասխան գերատեսչության կողմից չի տրամադրվում համապատասխան դրամական օգնություն՝ պատճառաբանությամբ, որ նրանք չեն ներակայցրել ամուսնության կամ ծննդյան վկայական, հնարավորություն կստանան օրենքով սահմանված (դատական կամ նոտարական) կարգով հաստատել իրենց ամուսին, զավակ կամ ծնող լինելու փաստը եւ համապատասխան փաստաթղթի հիման վրա ստանալ դրամական օգնություն: